<< 25 >> << 12 >> 2017թ

<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան
ընտանեկան բժշկության կենտրոն >>ՓԲԸ –ի տնօրեն՝
պարոն՝ Ա.Ասատրյանի

Հարգելի պարոն Ասատրյան

Ձեզ ենք ներկայացնում N «ՇՄԳԸԲԿ-ԳՀԱՊՁԲ-4-18-1» -1 ծածկագրով ,, Դեղորայքի ,, մատակարարման պայմանագրի կնքված և ստորագրված 2 օրինակը:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ Ա.Ասատրյան

«Նատալի ֆարմ» ՍՊԸ ք. Երևան, Աբովյան 42/2, հեռ.՝ (+374 10) 74 42 12, 72 06 20; ֆաքս՝ 74 42 20
«Натали Фарм» ООО г. Ереван, ул Абовяна 42/2, тел.: (+374 10) 74 42 12, 72 06 20; факс: 74 42 20
«Natali Pharm» Ltd Yerevan RA, # 42/2 Abovyan st., tel.: (+374 10) 74 42 12, 72 06 20; fax: 74 42 20

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «15» 12.2017թ.**

,, ,,Նատալի Ֆարմ ՍՊԸ-ն , ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ասատուր Ասատրյանի/ նույնականացման քարտ՝ 007355209, տրված 010-ի կողմից 2016-03-09/
որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է « Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն » ՓԲԸ-ի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ << ՇՄԳԸԲԿ-ԳՀԱՊՁԲ-4-18-1>> ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

,,Նատալի Ֆարմ,,ՍՊԸ
ընկերության անվանումը
ՀՀ,ք.Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ընկերության հասցե
,,Ամերիաբանկ,,ՓԲԸ
ընկերության սպասարկող բանկը
հ/հ 1570005065330100
ընկերության բանկային հաշվեհամարը
ՀՎՀՀ 01222567
Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը
Տնօրեն՝ Ա.Ասատրյան
ընկերության տնօրենի անուն, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ « Նատալի Ֆարմ »ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570005065330100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01222567

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ « Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն »

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 05500891

10. Շահառուի բանկը՝ <<Հայէկոնոմբանկ>> Գյումրի մ/ճ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ Հ/Հ 163128117617

12.Գումարը թվերով և բառերով՝ 215 997 / երկու հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր իննսունյոթ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովման տուժանք

15.Պայմանագրի ծածկագիրը՝N «ՇՄԳԸԲԿ-ԳՀԱՊՁԲ-4-18-1»-1

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Հավելված 7**
<<ՇՄԳԲԲԿ- ԳՀԱՊՁԲ- 4-18-1 >> * **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**«ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N** <<ՇՄԳԲԲԿ- ԳՀԱՊՁԲ- 4-18-1 >> 1

ք. Գյումրի « 25 » դեկտեմբեր 2017 թ.

*<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ* -ը , ի դեմս տնօրեն Արտուշ Ասատրյանի, որը գործում է *<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ* -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը ընդունել ապրանքը և պարտավորվում է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

I / Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

II / Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

III/ Վաճառողը պետք է դեղորայքը բաց թողնել մատակարարի դեղատնային ցանցերից կենտրոնի սպասարկման տարածքից , ոչ հեռու քան 1.5կմ:

ա / Ապրանքը տրվում է Գնորդի կողմից հաստատված/կնիքված և ստորագրված/ դեղատոմսերի հիման վրա՝ դեղատոմսը ներկայացնողին:Դեղատոմսերը Գնորդի կողմից տրվում է 2 օրինակ, որի երկրորդ օրինակը/ները/ մնում է <<Վաճառող>>-ի մոտ , իսկ առաջին օրինակը/ները/ տվյալ ամսվան հաջորդող ամսվա մինչև 5-ը Հաշիվ-Ապրանքագրի , ռեեստրի և հանձման ընդունման արձանագրություն /ըստ հավելված 4-ի/՝ հետ է տրվում <<Գնորդին>>:

բ / 100%, 50% և 30% զեղչով դեղորայքի տրամադրումը հիվանդներին ապահովելու համար դեղատունը պետք է ունենա դեղորայքի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ, որակյա աշխատակազմ:

գ/ Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը:

IV .Դեղորայքը պետք է ունենա

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. Մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

**Գնորդի պահանջով անվճար(100%) և արտոնյալ պայմաններով տրվող դեղորայքը (50% և 30 % զեղչով) բաց թողնել մատակարարի դեղատնային ցանցերից:**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2159979/ երկու միլիոն հարյուր հիսունինը հազար ինը հարյուր յոթանասունինը/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև __0__ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[2]:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[3]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[2] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

---

[4] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[5] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[6]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[7]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

---

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[8]

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| << **Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն** >> ՓԲԸ | <<Նատալի ֆարմ >> ՍՊԸ |
| ք.Գյումրի,Սարուխանյան 1 | Ք.Երևան, Տիչինայի փ. 3-րդ նրբանցք 2/2 |
| ՀՎՀՀ 05500891 | ՀՎՀՀ 01222567 |
| Հ/Հ163128117617 Հայէկոնամբանկի Գյումրու մ/ճ | Հ/Հ 1570005065330100 Ամերիաբանկ ՓԲԸ |
| Տնօրեն Ա.Ասատրյան | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Հավելված N 1*
*« 25 » 12. 2017 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

<<ՇՄԳԸԲԿ- ԳՀԱՊՁԲ- 4-18-1 >>

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | |
| | | | | | | | | | հասցեն | ժամկետը** ենթակա քանակը | | | |
| | | | | | | | | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ.եռ. | 4-րդ եռ. |
| 2 | 33621240 | ցիանակոբալամին 500մկգ / 1մլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, Հայաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – սրվակ,թղթյա տուփի մեջ, 1 հատի դոզան 500մկգ/մլ: Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: | սրվակ | 20,16 | 8064 | 400 | | 100 | 100 | 100 | 100 |
| 3 | 33651112 | ամոքսացիլին օշարակ 250 մգ/5մլ | Հեմոֆարմ, Սերբիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – շշիկ, չափագդալով , դոզան 250մգ/5մլ : Անվտանգությունը – Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: | հատ | 880,6 | 132090 | 150 | | 40 | 35 | 40 | 35 |
| 4 | 33691124 | Հելմինտոքս դ/կախույթ /պիրանտել / PO2CC01 125մգ/2.5մլ 15մլ | Լաբորատուար Ինոտեք ինտերնասիոնալի համար 22 ավենյու, Ֆրանսիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – պիրանտել /պիրանտելի էմբոնատ/ դեղակախույթ ներքին ընդունման 125մգ/2.5մլ 15մլ ապակե շշիկ: | հատ | 1373,6 | 41208 | 30 | | 10 | 10 | 5 | 5 |
| 5 | 33651115 | ցեֆալեքսին դ/կախույթ 250/ 5մլ 100մլ | Հեմոֆարմ, Սերբիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – ցեֆալեքսին /ցեֆալեքսինի մոնոհիդրատ / դեղակախույթ ներքին ընդունման 250/ 5մլ , 100 մլ ապակե շշիկ և չափիչ գդալ: | հատ | 764,15 | 30566 | 40 | | 10 | 10 | 10 | 10 |
| 6 | 33671116 | Գալոզիլոք /քսիլոմետազոլին /(քթակաթիլ) R01AA07 0.05% 10մլ | Արսանիտ ՍՊԸ, Հայաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – պլաստիկե սրվակ, կաթոցիկով քթակաթիլ , 0.05%: 10մլ: | հատ | 362,4 | 3624 | 10 | | 3 | 3 | 2 | 2 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 33621210 | Ֆերոպոլ կաթիլներ երկաթ պարունակող համակցություն , կաթիլներ 50մգ/մլ / 30մլ | Մեդանա Ֆարմ ԲԸ , Լեհաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը –երկաթի III հիդրոքսիդ պոլիմալտոզով ,կաթիլներ ներքին ընդունման համար 50մգ/մլ 30մլ ապակյան ֆլակոնի մեջ: Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «կոտրվող է»: | հատ | 2384,8 | 190784 | 80 | | 20 | 20 | 20 | 20 |
| 8 | 33651125 | Հեմոմիցին դ/կախույթ ազիթրոմիցին 200մգ/5մլ 20մլ | հեմոֆարմ, Սերբիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – ապակե սրվակ ներքին ընդունման դեղակախույթ , դոզան200մգ/5մլ :Անվտանգությունը – Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: | հատ | 1919,2 | 191920 | 100 | | 25 | 25 | 25 | 25 |
| 9 | 33651118 | ցեֆտրաքսիոն 1գ | '' Բարիսովյան բուժպատրաստուկների գործարան , Բելոռուս | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղափոշի, ներարկման լուծույթ, ապակե սրվակ ,դոզան 1գ/մլ: Անվտանգությունը – Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: | սրվակ | 169 | 84500 | 500 | | 125 | 125 | 125 | 125 |
| 10 | 33611350 | ցեվիկապ կաթիլներ /ասկորբինաթթու 100մգ/ մլ /կաթիլներ ներքին ընդունման/ 10մլ | Մեդանա Ֆարմ ԲԸ , Լեհաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – կաթիլներ ներքին ընդունման համար 100մգ/մլ 10մլ , ապակե շշիկ: Անվտանգությունը – Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «կաթիլներ»: | հատ | 1556,8 | 233520 | 150 | | 40 | 40 | 35 | 35 |
| 11 | 33661122 | Ցեֆիկոն Դ /պարացետամոլ /մոմիկներ 100մգ | Նիժֆարմ ԲԲԸ, Ռուսաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – մոմիկներ, պլաստմասեպատ տուփի մեջ , N10 հատ 1 տուփի մեջ, 1 հատի դոզան 100մգ, ուղիղաղիքային: Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «պահել սառը տեղում»: | հատ | 57,2 | 14300 | 250 | | 65 | 65 | 60 | 60 |
| 12 | 33621210 | Ֆերրում Լեկ , ծամելու,/ երկաթ պարունակող համակցություն /100մգ | Թաթքիմ ֆարմ պրեպարատի ԲԸ , Սլովենիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը –երկաթի (III) հիդրոքսիդի և պոլիմալտոսի համալիր դեղահատեր, 100մգ , ծամելու: Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: | հատ | 104,21 | 31263 | 300 | | 75 | 75 | 75 | 75 |
| 14 | 33621230 | ֆոլաթթու դ/հ 1 մգ | Բարիսովյան բուժպա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - դեղահատ, 1 դեղահատի դոզան 1մգ : Անվտանգությունը -Հանձման պահին | դեղահատ | 5,31 | 5310 | 1000 | | 250 | 250 | 250 | 250 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տրաստուկների գործարան , Բելոռուս | պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը - Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: | | | | | | | | | |
| 15 | 33611220 | Ռեգիդրոն /ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր ռեգիդրոն / դ/փոշի փաթ, 18.9 գ | օրիոն Քորփորեյշն, Ֆինլանդիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ : դեղափոշի , դեղաչափված 3.5մգ+2.5մգ+2.9մգ+10մգ , 18.9գ : Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: | տուփ | 245,6 | 12280 | 50 | | 15 | 15 | 10 | 10 |
| 17 | 33651112 | Ամոքսիկլավ ֆորտե 312/5մլ 100մլ /ամոքսացիլին+քլավուլանաթթու J 250+62.5/5մլ/ | Լեկ , Սլովենիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – ամոքսացիլին+քլավուլանաթթու ներքին ընդունման դեղափոշի, դեղակախույթ 250մգ/5մլ +62.5մգ/5մլ 100 մլ , ապակե շշիկ, չափագդալով : Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: | հատ | 2295 | 573750 | 250 | | 65 | 65 | 60 | 60 |
| 20 | 33651112 | Ամոքսիկլավ 156.25 մգ/5մլ 100մլ /ամոքսացիլին+քլավուլանաթթու 125+31.25/5մլ/ | Լեկ , Սլովենիա | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – ամոքսացիլին+քլավուլանաթթու ներքին ընդունման դեղափոշի, դեղակախույթ 125մգ/5մլ +31.25մգ/5մլ 100 մլ , ապակե շշիկ, չափագդալով : Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը : Պայմանական նշանները - «կոտրվող է»: | հատ | 1188 | 118800 | 100 | | 25 | 25 | 25 | 25 |
| 21 | 33631290 | իբուպրոֆեն օշարակ 100մգ/5մլ 100մլ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Հայաստան | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը – դեղակախույթ ներքին ընդունման, դոզան 100մգ/5մլ 100մլ,ապակե շշիկ, չափիչ բաժակ : Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը: Պայմանական նշանները - «կոտրվող է»: | հատ | 1384 | 484400 | 350 | | 90 | 90 | 90 | 80 |
| 22 | 33651170 | ացիկլոֆիր J05AB01 200մգ | Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ , Բելոռուս | Գնման առարկայի որակական տվյալները, չափերը - կապույտ գույնի դեղահատ, բլիստեր,1 հատի դոզան 200մգ : Անվտանգությունը –Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն (տես ծանոթությունը): Նշանադրումը – Ֆիրմային նշանի ընթեռնելի լինելը :Պայմանական նշանները - «վախենում է խոնավությունից»: | դեղահատ | 24 | 3600 | 150 | | 40 | 40 | 35 | 35 |
| | | | | | | | 2159979 | | | | | | |

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Ծանոթություն*

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. Մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

**** Մատակարարումն իրականացվում է- Անվճար(100%) և արտոնյալ պայմաններով տրվող դեղորայքը (50% և 30 % զեղչով) բաց թողնել մատակարարի դեղատնային ցանցերից, Պատվիրատուի սպասարկման տարածքից/ք. Գյումրի, Սարուխանյան 1/ , ոչ հեռու քան 1.5կմ:**
**Ապրանքը տրվում է Գնորդի կողմից հաստատված/կնիքված և ստորագրված/ դեղատոմսերի հիման վրա՝ դեղատոմսը ներկայացնողին:Դեղատոմսերը Գնորդի կողմից տրվում է 2 օրինակ, որի երկրորդ օրինակը/ները/ մնում է <<Վաճառող>>-ի մոտ , իսկ առաջին օրինակը/ները/ տվյալ ամսվան հաջորդող ամսվա մինչև 5-ը Հաշիվ-Ապրանքագրի , ռեեստրի և հանձման ընդունման արձանագրություն /ըստ հավելված 4-ի/՝ հետ է տրվում <<Գնորդին>>:**

***Եթե Պայմանագրի թիվ 1 հավելվածում (տեխնիկական բնութագրում) նշված դեղերը պահանջում են պահպանման և տեղափոխման հատուկ ջերմային, խոնավության ռեժիմներ կամ պայմաններ՝ ապա այդ պայմանները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» N 17-Ն հրամանի պահանջներին:***

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *<< Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ* | <<Նատալի ֆարմ >> ՍՊԸ |
| ք.Գյումրի,Սարուխանյան 1 | Ք.Երևան, Տիչինայի փ. 3-րդ նրբանցք 2/2 |
| ՀՎՀՀ 05500891 | ՀՎՀՀ 01222567 |
| Տնօրեն Ա.Ասատրյան | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները ՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը  Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն